

բոլորովին տղայ եղաւ. բժիշկը. որ Կարնոյ բերել տուի, եւ որ քու երթալեդ վերջ հասաւ, Դուինի բժշկին կարծիքը հաստատեց թէ ուղեղի հիւանդութիւն էր իւր հիւանդութիւնը եւ հնար չի կար բժշկութեան:

– Իմացաւ՞ քու հոս գալոյ:

– Եթէ իմանա՛ր, երբ ըսի թէ Գուրգէն՝ որ զինք ազատեր էր գերութենէ՝ հիմա բանտն էր, թէ մեզի էլ կը վայելէր նորա ազատութեան աշխատիլ, թէ ես որոշեր էի ամէն բան ոսկի, արծաթ, մարգրիտ, կալուած տալ գնա ազատելու համար, նա՛ ամէն խօսքիս «Այո, լաւ՝ իրաւունք ունիս» ըսաւ. բայց եթէ այս ամէնուն հակառակն ըսէի, դարձեալ «Այո, լաւ՝ իրաւունք ունիս» պիտի լսէի: Ուստի պետք եղածը առի, Մուշեղի մնաս բարով ըսի, Խուրեմն ու վանահայրը հետս, այսպէս ծպտեալ ելայ ճամփայ եւ եկայ, վասնզի սիրտս անհանգիստ էր: Հիմա դու, հայրիկ իշխան, ինձ այն զրուցէ թէ ինչ կարդաւորութիւնք՝ որ մենք մտածեր էինք ամէնքը նոյն կերպով պատրա՛ստ են թէ պետք եղաւ փոփոխութիւններ ընել:

– Ոչինչ փոփոխութիւն չի կայ. քու ինձ տուած ծրագրիդ համեմատ ամէն բան կարգադրուած էր: Ութ օր հոս անցուցի եւ գնացի Ալէ. մշակի հագուստով ներսեն զինեալ տասը հաւատարիմ քաջ զինուոր բերի այս առաւօտ: Վահրիճ Գուրգէնի թիկնապահներէն բերել էր ընտրանք, եւ տասներկու էլ Վասպուրականի քաջ թիավար, երկաթի ձողեր, լախտեր, սանդուխներ, պարաններ, բրիչներ, ամէն ինչ պատրաստ է:

– Դարբինը՞:

– Նա էլ պատրաստ է: Այդ ողորմելի կ'իստուէր ամրոցին համար մեր պատրաստ ութիւնք շատ եւ չափազանց են: Գիշերուան հասնելուն կը սպասենք միայն:

– Բայց ես գիշերվքնէ առաջ ուրիշ բանի էլ կսպասեմ... Կնոջ մը կը սպասեմ: